Հաստատում եմ

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23հիմնական դպրոցի

Տնօրեն ________ Տ. Հովսեփյան

«16» 10 2023 թ

Դասղեկի պլանը բխում է դասղեկի՝ դպրոցի կանոնադրությամբ ու պաշտոնային նկարագրով սահմանված գործառույթներից և դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանից։
Անօրենի՝ ՄԴՄ գծով տեղակալ՝ Գ. Հակոբյան

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի — Վանաձոր

մարզ — համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

Iբ

դասարանը

Նոնա Ալեքսանի Վարոսյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1.Կազմել աշակերտների անվանացանկը 2.

Կազմել դասարանի սոցիալական անձնագիրը

3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

Շաբաթվա աշխատանքներ

1.Անցկացնել դասղեկական ժամեր

2.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Դուրս բերել սովորողների բացակայությունները

3.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կրևառել դաստիարակական աշխատանքում

4. Իրականացնել դիտարկումներ ուղված սովորողների մեջ ԿԱՊԿՈՒ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈՒՊ –ների մշակմանը

5. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի միջոցով:

Դասարանի ղեկավարը (այսուհետ ՝ դասղեկ) , իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկոտում տեղեկացնում է դպրոցի տնօրենին ՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատում պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) – Iբ դասարանում սովորում են 24 աշակերտ, որից 17 աղջիկ և 7 տղա:Բոլորը դպրոց են հաճախում սիրով, պատրաստ, սակայն կան նաև դժվարացողներ: Անհատական աշխատանք է կատարվում ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Դասերին ակտիվություն են ցուցաբերում բոլորը:
2. Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Աշակերտական կոլեկտիվը համերաշխ է:
3. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

4. Ռազմահայրենասիրական դաստիարակություն
   Երեխաների մեջ ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ: Գաղափար տալ զինանշանի և դրոշի
   մասին: Սովորեցնել օրհներգը և այլ հայրենասիրական երգեր: Կազմակերպել զրույցներ նվիրված հայրենիքին, հայրենասիրությանը, հայրենիքի հերոս պաշտպաններին:

5. Ֆիզիկական դաստիարակություն -Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը նպաստող ակտիվ միջոցառումներ,մրցույթներ,էքսկուրսիաներ,արշավներ:
   Աշխատանքային դաստիարակություն -Դասարանում սահմանել հերթապահություն, հետևել դասասենյակի մաքրությանը: Տնային գործերում օգնել ծնողներին, հավաքեն իրենց իրերը և աշակերտական անկյունը:
6. Հոգևոր դաստիարակություն – Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ուսուցանել Տերունական աղոթքը: : Աշակերտների հետ այցելել եկեղեցիներ, սովորեցնել , թե ինչպես պետք է իրենց այնտեղ պահեն:
7. Գեղագիտական դաստիարակություն –Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքները այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:
   Այցելել մանկական և տիկնիկային թատրոններ;
8. Բնապահպանական դաստիարակություն – Զրույցների և էքսկուրսիաների միջոցով երեխաներին ծանոթացնել բնությանն ու շրջակա միջավային: Մասնակցել կազմակերպվող շաբաթօրյակներին և ծառատունկին :
9. Դպրոց – ընտանիք կապը – Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Հաճախ հրավիրել ծնողական ժողովներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	Դասագրքերի բաշխում: Ծանոթություն ուսուցչական կազմին, 1-րդ հերթափոխով աշխատելու կարգին,օրվա ռեժիմին,	դասվար աշակերտներ	
	Զրույց ծովակալ Իսակովի մասին: Ծանոթացնել դպրոցի ճաշարանից օգտվելու կանոնները;	դասվար	
Տարվա ընթ.	Ժամանակ առ ժամանակ ստուգել սովորողների սանիտարա-հիգիենիկ վիճակը, զրուցել առողջ ապրելակերպի մասին, <<Ինչով սնվել>>,<<Ինչպես սնվել>>,<<Ինչպես խուսափել	բուժքույր դասվար	

	վարակիչ հիվանդություններից >>:		
	Դասարանի ավագի,ծնողական խորհրդի կազմի ընտրություն, հերթապահության, դասացուցակի ձևավորում, դասարանական անկյան ստեղծում:	դասվար	
	Դասղեկի ժամ նվիրված ՀՀ անկախությանը:Սովորել օրհներգը, խոսել խորհրդանիշերի մասին:	դասվար	
Հոկտեմբեր	Տեղեկացնել ուսուցչի տոնի մասին:	դասվար աշակերտներ	
	Թեմա « Համագործակցություն», « մեր բակի պատմությունը»,ընթերցում ու քննարկում: Ա, ա հնչյուն –տառի ուսուցում: Դաս- միջոցառում:		
Նոյեմբեր	Զրույց<<Մեր դասարանը>>, <<Իմ ընկերները>>,թեմայով, բացատրել տղաների և աղջիկների վարքագծերի առանձնահատկությունների մասին:	Դասվար	
	Հիշել սովորողի իրավունքներն ու պարտականությունները, վարքի կանոնները, անվտանգ երթևեկության կանոնները:	դասվար	
Դեկտեմբեր	Հիշել սովորողի իրավունքներն ու պարտականությունները, վարքի կանոնները, անվտանգ երթևեկության կանոնները:	դասվար	
Դեկտեմբեր	Բնական աղետների մասին տեղեկություններ Թեմա «Կոնֆլիկտների հաղթահարում», «Արի հաշտվենք» ընթերցում և քննարկում	դասվար	
	Զրույց կազմակերպել չվող և ձմեռող թռչունների մասին:	դասվար	

Հունվար	Հայոց բանակի տոնի կապակցությամբ զրույց կազմակերպել, ծանոթացնել հայ հերոսներին, դպրոցի նահատակված հերոսներին, զրուցել նախկին և մերօրյա ազատամարտիկների ու հերոսների մասին:	դասվար	
Փետրվար	Զրույց եկեղեցական տոների մասին :	դասվար	
	Գիրք նվիրելու առիթով զրուցել Հովհաննես Թումանյանի մասին, ներկայացնել նրա հեքիաթները, պահպանել գիրք նվիրելու ավանդույթը: Զարգացնել ընթերցասիրություն,սեր կրթության և գիտության հանդեպ:	դասվար	
	Թարմացնել դասարանական անկյան նյութերը, մշտական	դասվար	
	հսկողություն սահմանել դասագրքերի,դպրոցական պարագաների նկատմամբ:Դիտել մուլտֆիլմեր ըստ Թումանյանի հեքիաթների		
	Նախապատրաստվել մայրերի տոնին, նրանց համար բացիկներ պատրաստել:	դասվար	

Մարտ-ապրիլ	Ծանոթացնել առաքելական եկեղեցական տոներին, պատրաստվել Սուրբ Զատիկին:	դասվար	
	Հիշեցնել ճանապարհային երթևեկության կանոնները: Զրույց ,, Վարորդի աշխատանքը,, թեմայով		
	Զրուցել ապրիլյան քառօրյա պատերազմի մասին,հիշել հերոսներին:	դասվար	
Ապրիլ	Ապրիլի 7	դասվար	
	Զբոսանք մոտակա այգի	դասվար	
Մայիս	Զրույց մայիսի 1-ի,աշխատանքի օրվա շուրջ:	դասվար	
	Զրույց հաղթանակների և խաղաղության մասին: Տարեվերջյան միջոցառում <<Հրաժեշտ այբբենարանին>>	դասվար	
	Ամառային արձակուրդների հանձնարարություններ	դասվար	
	Տարեվերջյան էքսկուրսիա	դասվար	

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկա

Անցկացման օրը,ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախասություն, զրույցներ,քննարկումներ և այլն) թեման	Անցկացման կարգը	Պատասխանատու
07.09.23	Անցկացնել զրույց – քննարկում հետևյալ թեմաներով. 1. Եկեք ծանոթանանք 2. Օրվա ռեժիմ	Առկա	Դասվար
14.09.23	Զրույց <<Իմ տունը >> <<Իմ ընտանիքը>> թեմայով Ովքեր են իմ ընտանիքի անդամները:	Առկա	դասվար
22.09.23	Զրույց -քննարկում<<Ինչպես պահպանել անձնական Հիգիենան>>: Զրուցել առողջ ապրելակերպի մասին:	Առկա	դասվար բուժքույր
28.09.23	Զրույց- քննարկում << Անկախության օրը >> ինձ համար	Առկա	Դասվար
05.10.23	Զրույց << Շնորհավոր տոնդ սիրելի ուսուցիչ>>:Բացիկների պատրաստում:	Առկա	Դասվար

12.10.23	Զրույց -քննարկում <<Ճանաչի՛ր քո հայրենիքը>>:Տեսաֆիլմի դիտում և քննարկում:	Առկա	Դասվար
02.11.23	Զրույց-քննարկում << Առողջ ապրելակերպի կանոնները>> : Կատարել մարմնամարզական վարժություններ:	առկա	Դասվար
09.11.23	Զրույց -քննարկում << Ինչ է ընկերությունը >> թեմայով	Առկա	Դասվար
16.11.23	Զրույց-քննարկում <<Համագործակցությունը մեր կյանքում>>թեմայով	Առկա	Դասվար
23.11.23	Տեսաֆիլմի դիտում, քննարկում << Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները: Ով է հետիոտնը: Մեր փողոցներում >> թեմաներով:	Առկա	Դասվար
30.11.23	Զրույց -քննարկում<<Բնական աղետներ, դրանց տեսակները և առաջացման պատճառները>>	Առկա	Դասվար
06.12.23	Մուլտֆիլմի դիտում, քննարկում << Հեքիաթի աշխարհում: Ձյունե թագավորություն>>	Առկա	Դասվար
14.12.23	Զրույց-քննարկում << Ինչ անել երկրաշարժի ժամանակ>>	Առկա	Դասվար
21.12.23	Զրույց –քննարկում:Գործնական աշխատանքի կատարում :<< Առաջին օգնություն>>: Մենք գնում ենք դպրոց: Սա պետք է իմանան բոլորը:	Առկա	դասվար, բուժքույր
25.01.24	Մեր բարեկամները « Քուչոյի ծննդյան օրը » ընթերցում և քննարկում	Առկա	Դասվար
01.02.24	Ծանոթացնել եղանակային փոփոխություններին: Կախարդական ձմեռ: Զբոսանք մոտակա այգի	Առկա	Դասվար
08.02.24	Զրույց –քննարկում << Հայոց հզոր բանակ>> թեմայով	Առկա	Դասվար
15.02.24	Զրույց քննարկում <<Գիրքը իմ բարեկամն է>> թեմայով	Առկա	Դասվար
22.02.24	Զրույց –քննարկում <<Մեր հերոս նախնիները>>թեմայով:	Առկա	Դասվար
29.02.24	Ծանոթացնել հետիոտնային անցումից օգտվելու կանոններին: Զրույց –քննարկում <<Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց>> թեմայով:	Առկա	Դասվար
07.03.24	Բացիկների պատրաստում <<Գարուն >>, <<Մայրիկների տոն>> Զրույց –քննարկում <<Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին>> թեմայով	Առկա	Դասվար
14.03.24	<<Լավ և վատ գործեր>> պատմության ընթերցում և քննարկում: Զրույց –քննարկում <<Որտեղ կարելի է խաղալ>>թեմայով:	Առկա	Դասվար

04.04.24	Զրույց-քննարկում <<Խոսք ես տվել, կատարի՛ր>> <<Մենք ուղևորներ ենք >>թեմաներով:	Առկա	Դասվար
11.04.24	Զրուց –քննարկում <<Ում եմ ամենից շատ սիրում>>թեմայով	Առկա	Դասվար
18.04.24	Զրուց –քննարկում <<Մայր իմ անուշ ու բարի>> թեմայով	Առկա	Դասվար
25.04.24	Զրուց-քննարկում <<Բարեկամությունը սկսվում է ժպիտից>> թեմայով	Առկա	Դասվար
02.05.24	Զրուց- քննարկում <<Հանդուրժողականություն>> <<Քաղաքամերձ ճանապարհին>>թեմաներով	Առկա	Դասվար
09.05.24	Զրույց –քննարկում <<Մայիսի 1-ը աշխատավորների և համերաշխության միջազգային օրն է>> թեմայով	Առկա	Դասվար
16.05.24	Զրույց –քննարկում <<Մայիսի 9-ը՝ հաղթանակի տոն>> թեմայով	Առկա	Դասվար
23.05.24	Զրույց - քննարկում «Շրջակա միջավայր » <<Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները>> թեմաներով	Առկա	Դասվար
30.05.24	Զրուց –քննարկում <<Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդները>> թեմայով	Առկա	Դասվար

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	1. Կազմակերպչական հարցեր: 2. Դասագրքերի բաշխում: 3. Ծնողխորհրդի կազմի ընտրությունը:	Դասվար	
Դեկտեմբեր	1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: 2. Հոգեբանական,կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբերակների քննարկում: 3. I կիսամյակի բացակայությունների ամփոփում:	Դասվար, հոգեբան	
Ապրիլ	1. Զրույց-քննարկում <<6 տարեկանների տարիքային առանձնահատկությունները>> թեմայով: 2. <<Հրաժեշտ այբբենարանին>> միջոցառման կազմակերպչական հարցերի քննարկում:		
Մայիս	1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում: 2. Բնութագրող գնահատման տարեկան ամփոփում: 3. Ընթացիկ հարցեր:		